

Այդ եթէ կ'ուզենք ազգին կենդանութիւն տալ, պէտք է գիտնանք՝ թէ ազգին մտայ մէջ շտկելու երկրորդ ծուռ գաղափարն է այսպէս տգիտութեամբ ազգին բարիք ընելու համար աշխատելու ձեռք զարնելը: Բսկից կը հետեւի որ ամէն ազգասէր անձինք եթէ կ'ուզեն ազգին օգտելու, բանի մը ձեռք չզարկած նախ պէտք է ջանան սովորելու ազգին ինչ ըլլալը, կարգերը, օրէնքները, իրաւունքները, պատուոյ մասունքը, և ընդհանուր ամէն բանին մէջ զձշմարտութիւնը ստուծենէն զատելու ճամբան. և դարձեալ մեծ զգուշութիւն ընեն ամէն ազգայինք, որ առանց սովորելու չգիտցած բանին ոչ ոք ձեռք զարնէ, որով մարդ առանց ուզելու ազգին նախատինք և անարգանք կը պատճառէ:

Հիմա կրնայ ըսել մէկը որ՝ եթէ այդպէս ամենքը ձեռուընին քաշեն ազգին օգուտը մտածելէն, պատճառելով թէ զայս և զայն կարեւոր գիտութիւնները չենք սովորած, այն ատենը ազգն անգործ մնալով կ'անպիտանանայ: Բայց ասոր պատասխանն ալ յայտնի է, թէ ի՞նչ է որ ազգին մէջ քիչ՝ բայց գիտուն, փորձ և խոհեմ մարդիկ գործեն, որով թերեւս քիչ մը ծանր՝ բայց ապահով կերպով առաջ երթայ ազգը, քան թէ շուտ ու մեծաքայլ առաջ երթանք ըսելով տգիտութեամբ մէկ փոսէն մէկալ փոսը գլորտըկիլ, որոնցմէ ազատին ալ ետքը դժուար կ'ըլլայ: Բայ խորհրդածութիւններս բնական ճշմարտութիւններ են. բաւական է որ մէկը հանդարտութեամբ մտածէ, կը հասկրնայ և իրաւունք կու տայ, և կը ջանայ ի գործ դնելու: Իսկ մէկն որ տաքցած զխով չկարենայ ուշ դնել և չհասկրնայ, այս պարագայիս մէջ ցաւելէն ուրիշ բան չենք կրնար ընել. որովհետեւ այնպիսին չէ թէ միայն ինքն իրեն, այլ և ազգին անարգող և փաստակար անձ մը կ'ըլլայ:

(ԳԻՏԻ ՀԱՐՈՒՆԱԳՈՒԻ)

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ապերախտութիւն:

Բերիկայի թշուառ գերեաց վիճակը մեր ընթերցողաց շատին ծանօթ է տեսակ տեսակ խղճալի պատմութիւններով, որ ամէն ատեն այդ կողմերը կը պատահին: Բայ յետագայ պատմութիւնս Սուրբ Խաչապուխտի մատենագրէն կ'առնունք՝ ցուցնելու համար թէ մարդկային չարութիւնն ու նենգամիտ ապերախտութիւնը ինչուան ուր կրնան հասնիլ:

Սուրբ Խաչապուխտի վաճառականի մը որդի, շահասիրութենէ գրգռուած՝ հազիւ թէ իր թարմ հասակին քսաներորդ տարին լմնցուցեր էր, միտքը դրաւ Բրեմտեան հնդկաստան երթալու, ամենեւին բանի մը տեղ չդնելով երկար նաւարկութեան մը վտանգները. ուստի մտաւ Բրեմտեան անունով նաւը, որ քիչ ատենէն ճամբայ պիտի ելլէր այն կողմերն երթալու, ու 1674^{ին} Յունիսի 16^{ին} ճամբայ ելաւ իր հօրը տուած մէկ դրամագլխով: Երկայն և տարժանելի ճանապարհորդութենէ մը ետքը՝ վերջապէս տեսնուեցաւ Բերիկայի ցամաքը. ու նաւը պղտիկ ծոցի մը մէջ խարխիս նետեց, ուր որ նաւապետը ջրոյ և ուրիշ պաշարներու սոստիկ կարօտութիւնը տեսնելով՝ ծով ինջեցուց մակոյկը, և հրամայեց իր մարդիկներէն քանի մը հոգւոյ, որ երթան հարկաւոր եղածը ձարեն: Սուրբ Խաչապուխտ ալ այն երկրին ինչ ըլլալը իմանալու հետաքրքրութենէ շարժած հետերնին գնաց. բայց ամէնը միա տեղ չափէ դուրս երկրին ներսերը երթալով՝ մէյմ'ալ յանկարծ պաշարուեցան խուճի մը տեղացի բարբարոսներէ, որոնք վրանին յարձակելով մեծ մասն սպաննեցին, և մնացածներն ալ փախչելու ստիպեցին, որոնք ցիր ու ցան եղան, անանկ որ մէջերնէն խիստ քիչ հոգի կրցան մակոյկով նաւը դառնալ:

Ինքը պատանին փախչելու շփոթու

Թենէն կարծես թէ մահը միշտ իր ետեւը կը տեսնէր . ու ասանկ երկար աւտեն անտառներու մէջ Թափառական պտրտելէն ետքը՝ լեռան մը վրայ ելաւ , որ իրեն ուրիշ լեռներէ աւելի անմարդի ու անբնակ կ'երևար . հոն ուժէ ընկած հեալով ու քրտինք Թափելով գետինը փռուեցաւ մնաց : Ամէն տեսակ սաստիկ տխուր մտածմունքներ միտքը ընկաւ . լաւ կ'ըմբռնէր որ այն բարբաւրոս երկիրներուն մէջ իրեն ուրիշ բան չէր մնար , բայց եթէ կամ սովէ մեռնիլ , կամ վայրի գազանաց , և կամ այն գազաններէն աւելի անգութ վայրենիներու ձեռքը մատնուիլ : Արբոր այս երկիւղալի մտածութիւններով լքեալ սաստիկ կերպով կու լար , տերևներու մէջէն ձայն մը լսեց , ու վախէն վեր ցատքելով երբոր կ'ուզէր փախչիլ , տեսաւ գեռահասակ աղջիկ մը , որ հանգարտութեամբ գէպ 'ի իրեն կու գար , և որն որ քաղցրութեամբ իրեն նայելով նշան ըրաւ որ կենայ : Այս բանէս քիչ մը սիրտ առած , ոտքը ինկաւ՝ աղաչելու կերպով մը , ու լալով և հառաչանաց ձայներով ու ձևերով որչափ որ կրցաւ՝ խնդրեց որ գթայ իր վրան , և միանգամայն կերպ մը գտնէ զինքը խալըսելու այս ցաւալի Թշուառութենէն : Առահասակ աղջիկը , որ Արիքոյ կը կոչուէր , թէպէտեւ բարբարոս էր , բայց բնութեամբ գթասիրտ ըլլալով՝ կէս մը պատանույն վայելուչ դէմքէն , կէս մ'ալ անոր աղաչանքներէն գութը շարժեցաւ , ու սիրով վեր վերցուց զինքը , և տարաւ մէկ այր մը , ուր որ Թողլով զանի՝ հեռացաւ ինքը քիչ մը ատենուան համար . և ետքը ետ դառնալով՝ բերաւ տեսակ տեսակ ան տեղի պտուղներէն , որպէս զի քիչ մը ոգի առնու , և վերջը տարաւ աղբիւրի մը քով՝ որ կարենայ ծարաւը անցընել :

Արծես Թէ անգղիացի պատանին որ կենաք մը ստացաւ , և հազար ու մէկ կերպով կը ցուցնէր իր եռանդուն շնորհակալութիւնը , որուն վրայ վայրենի աղջիկան սիրտը միշտ աւելի շարժելով՝ ապահովցուց զինքը , որ ամէն վախ մէկ-

դի Թողու , և թէ ինքն ամէն ջանք կ'ընէ որ իրեն բնաւ չարիք մը չհասնի . օրուան մեծ մասը իրեն հետը կ'անցընէր , և առատութեամբ կը ճարէր ուտելու համար ինչ որ հարկաւոր ըլլար . քնանալու ատենը պահպանութիւն կ'ընէր . վերջապէս այն ամէն խնամքը կը տանէր , ինչ որ մարդ մը կրնայ ընել իր եղբօրը կամ որ և իցէ վերջի աստիճանի սերտ սիրով կապուած մարդու մը :

Ինքը պատանին անոր հետ կենալ կցելով՝ սկսաւ կամաց կամաց հասկընալ աղջիկան լեզուն , և անոր ալ հասկըցնել իր միտքը , և երբեմն այս բանիս վրայ հարցընելով և երբեմն այն բանին՝ սկսաւ քիչ ատենուան մէջ այն տեղերուն և հոնտեղի բնակչաց վրայ տեղեկութիւն ստանալ , և թէ ինչ տեսակ ազնիւ բաներ շատ կը գտնուին այն կողմերը . երբոր այս ամէն բան իմացաւ , սկսաւ փափաք մը ցուցնել այդ բերքերէն մէկ քանին տեսնելու , և աղաչեց որ անոնցմէ քանի մը հատը բերէ իրեն գալու ատենը . Արիքոն յօժարութեամբ գոհ ըրաւ զինքը . որոնց վրայ վերջի աստիճանի հիացմամբ կը զարմանար , և նոր նոր բաներ ունենալու կը փափաքէր : Իսկ ինքը ախորժ մը զգալով զանի գոհ ընելուն վրայ՝ ամէն օր նոր նոր ընծաներ կը բերէր . երբեմն արծաթի կտոր մը , երբեմն ոսկոյ և երբեմն ալ հարուստ գոհարներ , և խիստ շատ անգամ հոն տեղի կենդանեաց գեղեցիկ փետուրներ կը բերէր :

Այս կերպով Թողլմաս քիչ ատենի մէջ շատ հարստացաւ , և մտքէն սկսաւ շնորհակալ ըլլալ իր բաղդին , որ ասանկ բարի վախճանի դարձուց նոյն իսկ իր Թշուառութիւնը . մինակ ետեւէն միջոց մը գտնելու , որով կարենար անկէց խալըսելու , և այս բանս ուրիշ կերպով չէր կրնար ըլլալ , բայց եթէ երբ պացույ մը նաւով՝ որ այդ ծովեզերքները մօտիկնար : Բայց լաւ կը գուշակէր թէ որչափ ծանր պիտի գար Արիքոյին զինքը Թողլուն ու իրմէ հեռանալը , և ոչ ալ դիւրին բան էր փախ-

չիլն ու նաւ մտնելը , թէ որ առիթ մը գտնէր՝ առանց Նարիքոյին խնայողութեամբ վերջապէս մտնելն մէջ որոշեց որ Նարիքոն համոզէ իրեն հետ մէկտեղ գալու . ու այնչափ բաներ պատմեց Նարոպայի վրայ , որ խեղճ ամերիկացի աղջիկը ախորժ մը սկսաւ զգալ այդ ամէն բաները տեսնելու , ու իրեն հետ մէկ տեղ երթալու : Եւ պատմէր հոն տեղի մեծագործ ու հրաշալի շէնքերուն վրայօք , որոնց մէջ ինքն ալ կրնար բնակիլ , խոր տուբորա պրերու ու բաց օդի տակ կենալու տեղ . չքեղ ու մեծաշուք ըզգեստներուն վրայօք , որոնք կրնար հագնիլ , փոխանակ կաշով մը ծածկուելու . և եղանակաց խստութիւններէն պատսպարուիլ , ու իր գեղեցկութեանը զարդ ու վայելչութիւն մը աւելցնել . կը գովէր հոն տեղի ախորժաւ համկերակուրներն ու ազնիւ ըմպելիքները , որոնք որ կրնար վայելել այն վայրի պտուղներուն ու պարզ ջրերուն տեղը և որոնք անհամեմատ առաւել ընտիր ու յարգի էին . միով բանիւ այն ամէն զուարճութիւնները , որոնք կրնար վայելել՝ երբեմն ալեաց վրայ նաւարկելով , երբեմն ահպարանոց նւթոյններէ քաշուած կառաց մէջ նստելով , ու երբեմն գիշերները ուրախութեան և պարերու զբաղիլ՝ նուագարաններու , երգերու և բազմազուարճ կոչունքներու մէջ : Եւ ինչպէս առանց ասոնց Նաբրին հետ այն աստիճանի սիրով կապուած էր , որ աշխարհքիս որ կողմն ալ երթալու հարկ ըլլար , պատրաստ էր որ և իցէ բան յանձն առնուլ ու երթալ : Եւ յսպէսով երկուքը մէկտեղ անհամբերութեամբ կը սպասէին որ մէկ նաւ մը խաւրէ Եստուած այն կողմերը , և գիշեր ու ցօրեկ փոխն ի փոխ պահպանութիւն կ'ընէին լըտեսելով ծովը : Եւ մը ատենէ ետեւ Նարիքոն , որուն աչքերը սուր էր , հեռուէն բան մը տեսաւ , և մէկէն իմացուց Նաբրին , որն որ իմացաւ թէ նաւ մը պիտի ըլլայ , որ հանդարտ քամիով ծովուն ալիքները պատռելով առաջ կու գար , և ծանուցեալ նշաններն

ընելով՝ իր ուղածին հասաւ , որով նաւը մօտեցաւ ցամաքին . երբոր գիշերը վրայ հասաւ , իրեն համար խաւրուած մակոյկը մտնելով՝ անվտանգ նաւը ելաւ կնկանը և անկէ ունեցած խել մը պարգևներովը հանդերձ :

Պատմելու բան չէ անգղիացի պատանոցն ուրախութիւնը . բայց Նարիքոն հայրենիքը թողու ատենը , որն որ մարդուս բնական սիրելի է՝ ով որ հոն ծնած է , թէպէտ և խեղճ բան ալ ըլլայ , ինչպէս նաւ ազգականները և բարեկամները , որոնք որ ալ պիտի չտեսնէր , այնպէս սաստիկ ցաւ մը իմացաւ , որուն համար խիստ շատ լաւ ցաւ ու հաւաչեց , և անանկ շուտով չէր կրնար մխիթարուիլ թէ որ Նաբրին քաջալերութիւնները չըլլային , որ զինքը ազգականներէն , բարեկամներէն , և հայրենիքէն ու ամէն բանէ վեր կը սիրէր : Բայց խեղճ ողորմելին չէր գիտեր թէ ինչպիսի ապերախտ ու անպիտանի մը ձեռք ինքզինքը կը մատնէր :

Եւ նաւը , որ զիրենք խալըսեց , անգղիացի էր , որուն վրայ պատանին աւելի կերպով մը ուրախացաւ . այս նաւս լեցուն էր հարուստ ապրանքներով , ու Վոլինէյ եղերքները գնուած գերիներով , որն որ Պարպատա կղզին կ'երթար . ասիկայ Նոդիւեան կղզիներէն մէկն է , և մասնաւորապէս խիստ բարեբեր է շաքարի մշակութեան համար , որուն ծառայութեանը կը գործածուին այդ եղիւնները : Երբոր նաւը խարխիս նետեց նոյն կղզւոյն դիմացը , մէկէն նաւահան գիտոր լեցուեցաւ բազմութեամբ մարդկանց , և ինչպէս ուրիշ վաճառքներու՝ այսպէս ալ գերիներու վաճառքը շուտ մը սկսաւ : (Տաւերժական ամօթ ու նախատինք Նարոպայի , որ ասանկ ախորժան առուտուր մը կ'ընէ այն թշուառ մարդկանց , այն բանը որ ուրիշ տեղեր հազիւ թէ կը համարձակին ընել եզնելու և ոչխարներու) : Տեսնելով բարոս Նաբրին որ այդ տխուր վաճառքին գնողները խիստ շատ էին , և թէ սուղ սուղ արք և կանայք կը ծախուէին , ազահութենէ շարժած և մոռնալով ամէն

բան՝ իբրև իր գերին խեղճ՝ Լարիբոն ալ ծախելու հանեց անդգամութեամբ : Լողորովին անօգուտ եղան խեղճին լա՛ն , յուսահատիլը , և գթութիւն ու ողորմութիւն խնդրելը , երգունցընելով հանդերձ , որ եթէ գերւոյ տեղ ուզենայ զինքը քովը պահել , գոնէ այդ կերպով զինքը պահէր . անօգուտ դարձեալ իր ըրած բարիքները յիշեցընելը , և թէ ինչպէս ազատած էր զինքը վայրենիներուն ձեռքէն , որոնք պատրաստ էին զինքը սպաննելու . և թէ ինչպէս այնչափ ատեն կեանքը պահէր ու պահպանէր էր , ամէն հարկաւոր եղած պիտոյքը ամենայն ջանքով հոգալով , և թէ ինչպէս հարստացուցեր էր զինքը այնչափ տեսակ տեսակ պարգևներով . և թէ միով բանիւ ինչպէս իրեն համար , և միայն իրեն համար թողուցեր էր թէ ազգականները , թէ հայրենիքը և իրեն ուրիշ ամէն սիրելի բաները : Լնօգուտ նոյնպէս այն դառն թշնամանքները սիրտը պաղըշտըկցընելու համար՝ ապերախտ , նենգաժող , գազանաբարոյ կանչելով , և հազար ու մէկ անէծքներ վրան թափելով . ու վկայ և վրէժխնդիր կը կանչէր Լարիինքը ասանկ քստմնելի եղեռնագործութեան մը . բայց Լնքըն որ և իցէ անգութ գազանէ մ'ալ աւելի անողորմ գտնուելով՝ խուլ կ'ըլլար խեղճին ամենախրաւացի կշտամբանացը , դառնագոյն գանգատներուն , և սիրտ շարժող ու սիրալիր աղաչանացը . և գոհ կ'ըլլար որ ուրիշները իրենց օտար լեզուն չէին հասկընար , որով և ոչ կ'ըմբռնէին իր անգգամութիւնը : Երջապէս ծախեց ողորմելին վաճառականի մը , և գինը առնելով՝ առանց երեսն ալ մէյմը նայելու կորսուեցաւ գնաց :

Կերջանիկն Լարիբոյ աւելի մեռած քան թէ կենդանի ընկաւ մնաց . իսկ զինքը գնողը , որ առջինէն ոչ ինչ նուազ բարբարոս էր , առանց խեղճին արտասուացը նայելու՝ քաշելով քաշկըռտելով տուն տարաւ : Եկ կողմանէ սրտին ցաւերը զինքը կը հիւծէին , մէկալ կողմանէ այն դառն կեանքը որ

կը քաշէր , և այն տարապայման աշխատանքները որոնցմով կը ծանրաբեռնուէր , (որ ատեն մը Լարոպացիք այս բաներս կ'ընէին ամէն մարդասիրութեան զգածմունքներէ մերկացած , և դեռ այս ամբարիշտ սովորութիւնս ինչուան հիմա բոլորովին դադրած չէ , ասանկ վարուիլ այն խեղճերուն հետ , իբրև թէ անբան անասուններ ըլլային . և կամ ալ գէշ) որով քիչ ատենի մէջ մաշեցաւ հիւծեցաւ , և նիհարնալով ողորմեաբար կեանքը լմնցուց :

Իսկ Լնքըն զինքը ծախած գնոյն ստակովը և այն հարուստ պարգևներով որոնք ձեռք ձգեր էր , և իր հօրմէն առած ստակովը , որ ուզածին պէս վաճառականութիւն ընելու համար տուեր էր հայրը , շատ բան վաստակեցաւ , և հարստութիւնը շատնալով՝ կը պարծենար իր բաղդին , իր մեծ ճարտարութեն ու խելքին վրայ . և թէ որ խիղճը զարնէր իր ըրած ամբարշտութեանը վրայօք , որն որ խիստ շատ անգամ կը հանդիպէր , ներկայ ունեցած յաջողութիւնը մտածելով՝ մէկէն մտքէն կը հեռացընէր :

Բայց Լարիինքը որչափ ալ ուշացընէ ասանկ անօրէն մարդկանց պատիժը , բայց ոչ երբեք կը մոռնայ : Եւ ասն զի թէպէտ և չափէ դուրս հարստացած էր , բայց ոչ երբեք գոհ ըլլալով ունեցածին վրայ , մանաւանդ թէ անյազ փափաքով աւելի հարստանալու յիշեց այն տեղը , ուր որ երկայն ժամանակ կեցած էր ապերջանիկ Լարիբոյին հետ . միտքը եկաւ հոն տեղի արծաթը , ոսկին և այն ակունքը որ հոն առատութեամբ կը գտնուէին . ուստի որոշեց ուրիշ քանի մը ընկերներու հետ մէկտեղ նաւ մը զինել ու հոն երթալով այդ գանձերը ձեռք ձգել : Հասան այդ կողմերը և ցամաք երկրին ներսերը խել մը տեղ առաջ գացին , զորոնք տեսնելով՝ մէկէն վայրենիները վրանին յարձակեցան . բայց իրենք վայրենիներէն աւելի ուժով գտնուելով՝ յաջողեցաւ իրենց , որ զանոնք շուտով մը ցրուեն : Ետով աւելի սիրտ առած ալ առաջները գա-

ցին . և երկու հարուստ հանքեր գտնելով , որոնց դեռ եւրոպական անյազուրդ ագահութիւնը ձեռք չէր դպցուցած , սկսան դուրս հանել այդ անգին նւթերը : Բայց վայրենիները կրկնապատիկ շատնալով և աւելի աղէկ զէնքերով պատսպարուած՝ նորէն վրանին յարձակեցան , և իրեն մարդիկներէն ինչ մը հոգի սպաննելով՝ զինքն ալ ոջ ձեռք ձգեցին : Երկնային վրէժնդիր բարկութիւնը յայտնի տեսնուեցաւ իր վրան . և կարծես թէ այն բարբարոսները մակաբերեցին որ Եփրայի մաստնութեան ու արեանը պարտաւորն էր . և անոր համար շատ բարբարոս , անգութ և սոսկալի տանջանքներով սպաննեցին , և անողորմաբար պատառ պատառ ընելով կերան : Ո՛հ , ինչո՞ւ այս սոսկալի տեսարանիս հանդիսատես ու վկայ չեղան այն ամէնքը , որոնց համար նենգութիւնը խաղաղիկ մըն է , և ապերախսութիւնը կատակ :

Թարգմանեաց 'ի Սոառէ

Գ . Հ .

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՌԻՔ

Որովայնն ուտելով կը յագենայ ,
Աչքը տեսնելով կ'անթեանայ .
Եթէ կ'ուզես յագեցնել որովայնդ , կե՛ր .
Իսկ եթէ աչքդ կշտացնես , մի հետաքրքրէր :

Ծովէն ելած ձուկը և տուն եկած հիւրը իրեք օրէն կը հոտին :

Երեք տեսակ են մարդուս թշնամիները . առաջին՝ յայտնի թշնամի , երկրորդ՝ գաղտնի թշնամի . և երրորդ , որ ամենէն գէշն է , բարիքդ ուղղ թշնամի :

Առջի երկուքէն կը դուռնանք , որ խայթելով կը ցաւցնեն . իսկ այս երրորդը կը սիրենք , որ շոյելով կը մեռցնէ :

Առջիներուն ո՞վ ըլլալին յայտնի է . երրորդն ո՞վ կը ճանչնայ . ամէն մարդուն իր անձն է :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Եւրոպայի բնական և հետաքրքրական գիտելիքները : (Տես երես 219)

Երբոր Սաւոյայ Սպիտակ Լեռնէն , որ Լ'Լպեան գօտիներուն բարձրագոյն գագաթն է , դէպ 'ի Ս'իջերկրական ծովը աչքդ դարձնելու ըլլաս , կը տեսնես բաժնուած Տոֆինէի Լ'Լպեան գօտիները կամ Լ'պէռի բաժնին , ետքը Բարձր ու Ստորին Լ'Լպեայք ըսուած գաւառներուն գօտիները , անկէց վար Կովեզերեայ Լ'Լպեանց գօտիքը , որ դէպ Խտալիա կ'երկրնան . անկից անդին դեռ կը շարունակեն և կը կոչուին Լ'պենեանց լեռինք :

Սոգիւղ գաւառին սահմանագլխոյն վրայ է Ս'անդուլեռը՝ բարձր 6,798 ոտք , ութ ամիս ծածկուած աչք խտտղեցընող ձեան վերարկուով մը : Բարձր-Լ'Լպեանց սահմանին գագաթներուն վրայ Պրիանտոն ամուր քաղաքը կայ , որ Գաղղիոյ քաղաքներուն մէջ ամենէն բարձրն է . բերդը քաղքէն հարիւր եօթանասուն ոտք խորութեամբ դարաւանդով մը բաժնուած է , որուն խորը Տիւռանս գետը կը խոխոջայ . այն ահաւոր անդունդին վրայ զարմանալի ճարտարութեամբ մէկ կամարով կամուրջ մը ձգեցին , որուն աղեղին երկայնութիւնը հարիւր քսան ոտք է :

Վրէթէ փարսախ մը Լյաբէն հեռու՝ որ Բարձր-Լ'Լպեանց գլխաւոր տեղն է , Բելոդիէ լիճը կայ , որն որ գաւառին ամենէն աղուոր տեսարանն է . հոս ամէն ճամբորդներ կը հանդրպին , անոր երերուն դաշտը տեսնելու համար , որն որ մէկ տատանեալ կղզի մըն է՝ ձևացած հետզհետէ լցուելով եղէգներու , շուշաններու և ուրիշ լճային տնկերու փտութիւններով , որուն երեսը ծածկուած է հիմա կանաչ դաշարի մարգով , զորն որ ամէն տարի կը հնձեն :